

լուծվին մը կատարելու Մխիթար Աբբա-
հօր շիրմին, որուն վրայ ծնրադիր կ'ամ-
փովէր ինքզինքը աղօթքի մէջ, կը բաժ-
նուէր մեզմէ Հոգեւոր Տէրը կրկնելով
«Կեցցէ Մխիթար», «Կեցցէ Մխիթարեան
Մխարանութիւնը», ու մաղթելով վերստին
միշտ յարաճուն վերելք իր գործունէու-
թեան այլեւայլ մարդերուն մէջ: Ու միա-
բաններս ալ կը կրկնէինք յուզուած «Կեց-
ցէ Հոգեւոր Տէրը», «Կեցցէ Նուիրապե-
տութիւնը», մինչ արդէն շոգեմակոյլը
պատրաստ կը սպասէր առաջնորդելու զին-
քը Փխցցալէ Ռոմա հրապարակը: Կ'ըն-

կերանային խումբին՝ Գերպ. Աբրահամյան, Ընդհ. Աթոռակալը, Գերպ. Հ. Յովհան Աւզեր, եւ խումբ մը ուրիշ Հայրեր: Մ. Ռ. Վարժարանի Տեսչութիւնն ու աշակերտութիւնն եւս եկած էր հոն մատուցանելու ողջերթի իր յարգանքը: Ժամը 14ին էր որ կը մեկնէր ասոքափոխմանով դէպի Հռոմ՝ Արհ. Գերպ. Պետրոս Քէտիճեանի եւ Հ. Կարապետ Վ. Ամատունիին հետ՝ թողլով մեր հոգիներուն մէջ անջինջ յիշատակը իր շնորհաբեր ու սիրալիկ այցելութեան:

hU P .

—000—

Ի ՇՆՈՐՀԱԲԵՐ ԳԱԼՈՒՍՏ ԱՄԵՆ. ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ

ԳՐԻԳՈՐԻ ՊԵՏՐՈՍԻ ԺԵ. Ի

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԱՏՐԻԱՐՔԻ ՏԱՆՆ ԿԻՆԻԿԻՈՅ

Յարժան պղնձի դրոշմեցե՛ք. Մե՛ծ է օրս այս: —
Տուն Միխիթարայ գոչէ. «Օրինեալ ես որ գաս»: Սիրտք ընդհանուր կրկնեն ըզոյն միաբան.
Եւ խնկէ զօգ տանաբիս բոյրն օրհնութեան:

Այն ինչ դադար առեալ ասեղ փոռորկին՝
Յողջոյն նժդեհ որդւոց յափուսն գաս Հանդիւն.
Ո՞ր բերկրութիւն քան զայս քաղցրիկ մեզ ի յոյս,
Ո՞ր աւետիք յերկնից հասեալ ի խրախոյս:

Զատնուածային սէր կնիք եւ դրօշ Քեզ կազմեալ
Առ Մըխիթար փութաս հոգւով հեգափայլ,
Նորին շաղաց դիմեալ ըզհետ եռանդուն
Առ ի Քրիստոս նորոգել զագգ մեր ողջոյն: —

Ո՛հ ֆաղցրը՝ ինձ տեսի՛, որում դարձ նախկին
Յոզւոց պարզել տենչացան յիղձ կաթոզին.
Ահա սէր, լռյս մառազայրեն միւսանգամ
Եւ փարատին մըքերք սրտից դառնութեան...:

Լուսաւորիչ, Վրկայասէր Քեւ դառնան,
Սո՛ւրբ Հայրապետ, ի կեանս՝ ի յոյս՝ Թորգոմեան:
Թարգմանչաց հոյլ ի բան, ի գիր Քեզ օճան
Յայգուշ Փրկչին Հարբ եմ Ուխտին Մխիթարեան:

Վայրավառին գազամաքեկն ահա հօտ՝
Զոր ննեգեաց չար վարձկանաց հոյլ նախանձոտ,
Առ քաջ Հովի՛լըդ յհեղեղս ընթանան
Ի Պետրոսեան խառնել գալիք փրկուքեան:

Սիրտան չհիկդ հա՛ս ժամ, զի քեւ բերկրեցցին
 Եկեղեցի, Ազգ, Հայրապետս զյլովին.
 Երանացի եւ Մըխրաբ Պետրոսեան
 Ախոյեան մեծ սուրբ Հաւատոյս միութեան:

Հ. ԵՂԻՍՍ Փ.

8 4 7 6 4 4 2 4 3 7 5 0 3 6 9

ԵՐԱՆԱՇՆՈՐ Հ ՄԵԻԹԱՐ ԱՔԱՆՉՈՐ
ՏԱՐԵԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԸ

Ամէն տարի անխափան նուիրական պար-
տականութեան պէս՝ Միխիթարեան նորա-
հաս երիտասարդ վարդապետ մը կը բերէ
իր յարգանքի ու սիրոյ տրիտուրը Երնշ-
Հիմնադրիս մահուան յիշատակին առի-
թով: 196 ըդ տարին է որ կը լրանայ այս
տարի անոր մահուան. մարմարեայ կա-
վարիչին տակ ամփոփուած է մարմինը,
բայց հողին կը թեւածէ արծուի պէս իր
զեղեցիկ դաստակերտին վրայ, եւ հոն՝
ուր հայ սիրտ մը կը բաբախէ:

Այս տարի վանքի մեր աշակերտութիւնը եւ Մ. - Ռ. վարժարանի սաները Ս. Զեւոնի ամարանոցին մէջ համախմբուած տօնեցին այդ յիշատակը՝ ի ներկայութեան Ուխտիս Գերպ. Աբբահօր՝ Սրապիոն վ. Ուլուհոճեանի, Մեծարդոյ Հայրերու եւ մտերիմ բարեկամներու։ Այդ յիշատակէն անբաժան է մխիթարեան սաներու սրտին մէջ՝ նաեւ յիշատակը Սամուէլ Մուրատի եւ Ռափայէլ Ղարամեանի, զոյգ բարերարներու՝ որոնց անունը ոսկետառ քանդակուած է այնքան երախտագէտ աշակերտներու հոգւոյն խորը։ Տեղի ունեցան երգեր, արտասանութիւններ, ընթերցումներ գեղեցիկ ու զգացուած ուղերձներու։ Բայց պաշտօնական ճառախօսք, որուն կ'իյնար հիսեւ Մեծն Մխիթարի տարեկան ներբողեանը՝ էր Հ. Արթարի տարեկան ներբողեանը, որ իր ճառին նիւթ առած սէն Աղամեան, որ իր ճառին նիւթ առած հետեւեալը. «Աստուածսիրութիւնը Մխիթարի մէջ»։ Գեղեցիկ կերպով ներկայացուց ան թէ ինչպէս Մխիթար պատանին, եւ յետոյ երիտասարդ քահանայ եւ վարդապետ՝ փնտոնեց ամէն բանէ վեր զԱստուած, ու սիրեց զայն իր վիշտերուն, ուսած, ու սիրեց զայն իր վիշտերուն, տառապանքներուն, կրած հալածանքներուն։

բուն, հիւանդութիւններուն մէջ: Աստուածային սիրոյն ճշմարիտ ցոլացումը, եղբայրսիրութիւնն է, ըսաւ, եւ որոնք վրայ ծանրացաւ վեր հանելով Միխիթարի մէջ այն իսկական առաքեալի ոգին՝ որ իր անձը կը գնէ մերձաւորին համար, այն վսեմ գաղափարականը ծառայելու իր Ազգին, օգտակար ըլլալու ժողովուրդի զանազան խաւերուն, սկսեալ մանուկներէն մինչեւ խածագոյն գիտնականը, մինչեւ բարձրամէրէն միջոցաւանները: Նոյն այդ բուն սէրէն միջոցած է որ իր Միաբանութեան ալ, պտուղը եւ զոհը այդ սիրոյն, տուաւ այնպիսի ուղղութիւն մը՝ որ անխտոր քալէ իր հոգիէն ճառագայթած լոյսին առաջնորդութեամբ:

—000—

ՄԵՊՏԵՄԲԵՐ 8
ՄԱՏՈՒՅՈՒՄՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ
Ի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Սեպտեմբերի 8ը Միաբանութեանս պատմութեան մէջ նուիրական թուական մըն է։ Հիմնարկութիւնը եւ Միաբանութեան համար կենսական ջնորհքներու ստացումը այդ թուականին զուգադիպած է։ Եւ ճիշտ այդ օրուան վերապահումն էր այս տարի հանդիսաւոր Ս․ Պատարագի մատուցումը՝ ի շնորհակալութիւն խաղաղութեան մեծ պարգեւին։

Երբ անակնկալ աւետիսի պէս տարած-
ուեցաւ խաղաղութեան լուրը ու լեցուց
սրտերը անպատում ցնծութեամբ, ամբողջ
քրիստոնեայ աշխարհ աղօթեց, թափօրներ
կաղմակերպեց: Ս. Զենոնի մեր ամարա-
նոցին մէջ ալ, յետ միջօրէի Մայիս 8-ին,
երգուեցաւ եռաձայն «Զքեղ Աստուած գո-
հարանեմք»ը, խանդավառ եւ յուզուած ու
գեւորութեան մը մէջ: Բայց Սեպտեմբեր